

sehr getreu wiedergibt und oft zur Rekonstruktion strittiger griechischer Textpassagen herangezogen werden kann, zeigt übrigens P. Mahe in Rev. ét. gr. XCIV, 1981, pp. 523—525, an Stobaei Hermetica XIX.

Kowal Béla

Literaturhinweise:

Bedrossian (1879): New Dictionary, Armenian-English, Beirut.
Haas (1966): Die phrygischen Sprachdenkmäler, LB X, Sofia.

Mann (1968): An Armenian historical grammar, London.
Meillet (1977): Etudes de linguistique et de philologie arméniennes, II, Louvain.
Merlingen (1957): Gedenkschrift Paul Kretschmer, II, Wien.
Schindler (1967): Die Sprache, XIII, 197 ff.
Schindler (1977): Die Sprache, XXIII, 25 ff.
Schmitt (1981): Grammatik des Klassisch-Armenischen, Innsbruck.
Solta (1960): Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen, Wien.

ՅԻՍՆԱԿ-ՅԻՍՆԱԿԱՑ, ՅԻՍՆԵԱԿ-ՅԻՍՆԵԱԿԱՑ

Հայ Տօնացոյց-Օրացոյցին մէջ Աստուածայայտնութիւնը կանխող եօթը շարաթները կը կոչուին Յիսնակաց, կամ Յիսնեկաց շրջան: Յիսնակաց շրջանը ժամանակին Քառասնորդաց Մեծ Պահոց նման պահքի ու ծովի շրջան եղած է*, ինչպէս կը վկայէ Հայկազեան Նոր Բառգիրքը, Բ. Հատոր, էջ 360՝ «որ երբեմն անընդհատ պահքիւր զաւուրս յիսուն, այլ այժմ ընդհատութեամբ», եւ որ այսօր վերածուած է երեք շարաթապահքերու՝ ա. Յիսնակամուտի Պահք, սկիզբը, ուր սուրբերու յիշատակութիւն չկայ, բ. Ս. Յակոբայ Պահք, շրջանի մէջտեղը, Ս. Յակոբէն առաջ, սուրբերու յիշատակութեամբ, եւ դ. Աստուածայայտնութեան, կամ Ծննդեան Պահք, վերջաւորութեան, նոյնպէս առանց սուրբերու: Այս վերջին պահքը քանի մը կաթողիկէ տօնացոյցերու մէջ փոխադրուած է Դեկտեմբերի 25ը նախորդ ժամանակաշրջանին մէջ, իբրեւ Ծննդեան Պահք:

Յիսնակ կամ Յիսնեակ բառը յառաջ կու գայ յիսուն-էն, քանի որ եօթը ամբողջական շարաթ կը տեւէ այդ շրջանը: Եօթն անգամ եօթը, ըստ ինքեան միայն 49 կ'ընէ, սակայն եթէ միասին հաշուելու ըլլանք առաջին, կամ վերջին օրն ալ, կ'ունենանք 50: Իրականութեան մէջ այս օրերը իրապէս յիսուն կ'ըլլան միայն ա'յն տարիներուն, երբ Տարւոյ Գիրը կ'ըլլայ 2, է, 10, Ծ, Մ, Յ, 2, Ռ, Ի կամ Փ, ուրիշ խօսքով՝ երբ Զատիկը գայ՝ Մարտ 27, 28, Ապրիլ 3, 4, 10, 11, 17, 18, 24 կամ 25ին: Ապա թէ ոչ կը տարուբերի 52 եւ 48 օրերու միջեւ:

Ասկէ բոլորովին տարբեր է հռոմէական տօնացոյցի Adventum — Գալստեան Կիրակին, ուր նկատի կ'առնուին Դեկտեմբեր 25ը կանխող չորս կիրակիները, նոյն իսկ եթէ չորրորդը, վերջին կիրակին, Դեկտեմբեր 24ին՝ Ճրագալոյցի խթման օրը հանդիպի: Ուրեմն՝ հռոմէական Adventum-ը կիրակիներու հարց է, իսկ Հայ Յիսնակը՝ օրերու:

Հայ տօնացոյցին մէջ, երբ տարւոյ գիրն է Ա, Բ, Գ, Ը, Թ, Ժ, Կ, Հ, 2, Ն, Ծ, Ո, Ս, Վ, Տ, Յիսնակաց շրջանը կ'ունենայ ութը կիրակի, Յիսնակամուտի կիրակին ալ միասին

հաշուելով, իսկ Դ, Ի, Դ, 2, Բ գիրով տարիներուն, որոնց շարունակութիւնը կը մտնէ Գ, Ժ, 2, Ո, Տ գիրերով տարիներուն մէջ՝ միայն եօթը, եթէ չհաշուենք Յունուարի 6ը, որ այդ տարիներուն ութերորդ կիրակին կըրնայ համարուի: Ե, 2, Լ, Խ, Ծ, Ճ, Մ, Յ, Պ, 2, Ռ, Յ, Ի, Փ եւ ՔՓ տարիներուն, որոնք իրենց շարունակութեան մէջ կը դառնան Դ, Ե, 2, Ի, Լ, Խ, Դ, Ճ, Մ, 2, Պ, 2, Բ, Յ, Ի՝ կ'ունենանք միայն եօթը կիրակի, ընդամենը՝ յիսուն օրուան տեղ 48, 47 եւ 46 օր միայն: Այս հաշուով, մեր ամէն երրորդ Յիսնակաց կիրակին կը համապատասխանէ հռոմէական տօնացոյցի Adventum-ի առաջին կիրակիին, բացի 2, է, 10, Ծ, Մ, Յ, 2, Ռ, Ի, Փ եւ ՔՓ տարիներէն, երբ Adventum-ը կը համընկնի մեր Յիսնակաց երկրորդ կիրակիին: Ուրիշ խօսքով, կարելի է ըսել, թէ Յիսնակամուտի, այսինքն առաջին կիրակին կրնայ գալ միա'յն ու միա'յն Նոյեմբերի 15, 16, 17, 18, 19, 20 եւ 21ին, ո'չ առաջ, եւ ո'չ ալ այն թուականէն ետք, ինչպէս շատ ուղիղ ձեւով նշանակուած կը գտնենք 1880ին Վիեննա տպուած «Տարեւոր Կարգ Դպրութեան, կամ Կարգաւորութիւն Սրբոյ Պատարագի, ըստ Արարողութեան Եկեղեցւոյ Հայաստանեայց, ի պէտս Սարկաւազաց եւ Դպրաց» գործին մէջ, տես անդ, էջ 349 եւ 366: Համեմատէ նոյնպէս. Dulaurier M. Edouard, Recherches sur la Chronologie Arménienne Technique et Historique. Paris 1859, էջ 402—405:

Այս շարժականութեան պատճառով է, որ 2, է, 10, Ծ, Մ, Յ, 2, Ռ, Ի, Փ եւ ՔՓ տարիներուն մեր տօնացոյցին մէջ ունինք շատ յատկանշական շարաթ մը, Նոյեմբեր 13—19, կամ 14—20, որ Աւելորդաց շարաթ կը կոչուի, եւ է Խաչի 10րդ կիրակիի շարաթը, եթէ Պաշտօնացի տօնի կիրակին ալ միասին հաշուենք: Ըստ ինքեան 10րդ Կիրակի անուանումն ալ սխալ է, երբ զօրծածենք «Զկնի Խաչի» բացատրութիւնը, որովհետեւ անով կը հաստատենք թէ Պաշտօնացին ետք այնքան կիրակի անցած է: Սակայն մեր տօնացոյցին համաձայն, քանի որ Սեպտեմբեր

14ին է միշտ Պաշտի տօնը, համաձայն Յոյնե-
րու եւ հռոմէականին, բայց նոյնը կը փո-
խադրուի, պատուաւոր ձեւով տօնել կարե-
նալու համար, մօտաւոր կիրակին, կը հաս-
տատուի Սեպտեմբեր 14ին նշանակութիւնը:
Ըստ այսմ եթէ Սեպտեմբերի 14էն առաջ
դրուած է տօնը, առաջին ՉԿՆԻ-ն 14ին յա-
ջորդող կիրակին կ'ըլլայ, որով Ա, Բ, Ը, Թ,
Կ, Հ, Ն, Ծ, Ս, Վ գիրով տարիներուն կ'ու-
նենանք միայն ութը կիրակի եւ ո՛չ թէ ինը,
իսկ մնացած բոլոր միւս գիրերուն՝ ինը, եւ
ո՛չ երեք 10: Ուստի կա՛մ պէտք է փոխել
համարանքի ձեւը եւ ըսել Ա-Թ կիրակի ՉԿՆԻ,
կա՛մ թողուլ Ա-Ժ, եւ ըսել պարզապէս
ԿԻՐԱԿԻ ԽԱՉԻ: Այս աւանդական կանոնե-
րու անտեսումը, կամ անծանօթութիւնը,
մա՛նաւանդ այս վերջին յիսնամեակին, պատ-
ճառ դարձած է, որ տիրէ զանազան օրա-
ցոյց-տօնացոյցերու մէջ խառնակութիւն մը:
Օրինակի համար. մինչ ազգային, Առաքելա-
կան Եկեղեցին Զ, Է, Խ, Ծ, Մ, Թ, Զ, Ռ, Ի,
Փ եւ ՔՓ գիրով տարիներուն Ս. Յակոբ
Մծբնայ Հայրապետի տօնը կը տօնէ իրաւա-
ցիօրէն Դեկտեմբեր 17ին կամ 18ին, անդին
հայ Կաթողիկէ Պատրիարքարանի տօնացոյ-
ցերու եւ եկեղեցիներուն մէջ տօնուած է
անկէ մէկ շաբաթ առաջ արդէն, Դեկտեմ-
բեր 10ին կամ 11ին, բայց հայ կաթողիկէ
հաւատացեալները կը հետեւին հայ մեծա-
մասնութեան եւ Մխիթարեան օրացոյց-տօ-
նացոյցերուն:

Յիսնակաց վերջին շաբաթը, Աստուա-
ծայայտութեան, կամ Ծննդեան շաբաթա-
պահին է: Մինչ տօնացոյցի բոլոր շաբաթա-
պահները կիրակնօրեայ բարեկենդանի մը կը
յաջորդեն եւ շաբթուան վերջը եկող կիրա-
կիով կը վերջանան, հոս Աստուածայայտու-
թեան, կամ Ծննդեան պարագային խնդիրը
կը փոխուի: Քանի որ Յունուարի 6ը հաստա-
տուն թուական մըն է, եւ շաբթուան ուեւէ
օրը կրնայ հանդիպիլ, Աստուածայայտ-
ութեան բարեկենդանին ալ ստիպուած է
կապուիլ որոշ թուականի մը, որ իր կարգին,
կրնայ նոյնպէս շաբթուայ ուեւէ մէկ օրը գալ:
Իբրեւ հաստատուն թուական թէ՛ ձեռագիր
եւ թէ՛ տպագիր բոլոր պարզատումարներուն
մէջ նշանակուած է Դեկտեմբերի 29ը, իբրեւ
բարեկենդան: Սակայն ձեռագիրներուն մէջ,
այս թուականն ալ վերջնական չէ, որովհե-
տեւ եթէ Աստուածայայտութեան բարեկեն-
դանի այս 29 Դեկտեմբերի օրը չորեքշաբթի,

կամ ուրբաթ օր մը հանդիպի, ինչպէս է՝
Է, Ծ, Թ, Ռ, Փ, ՔՓ, եւ Ե, Լ, Ծ, Պ, Յ գիրով
տարիներուն, բարեկենդանը մէկ օրով կը
կանխուի, քանի որ «բարեկենդանն զպսակ
չի լուծեր, բայց խթումն կու լուծէ»,
Տես Տաշեան Յուցակ, Թիւ 400 ձեռագիր,
Թղ. 19ա:

Խթում բառը ինքնին արդէն կը նը-
շանակէ «բան մը ուտել» «բերանալուծ»
ընել: Եթէ Դեկտեմբերի 29ը սկզբունքով
ընդունինք իբրեւ բարեկենդան, պահել օրերը
կ'ըլլան Դեկտեմբեր 30-Յունուար 4ի օրերը,
այսինքն վեց օր, քանի որ Յունուարի հինգը
իբրեւ Խթում, արդէն բերանալուծի օր է:
Ճաշոցի եւ ժամակարգութեանց մէջ սա-
կայն պահել այս օրերը միայն հինգ նշանա-
կուած են եւ ոչ վեց, նկատի առնելով, որ
այդ շաբթուն ընթացքին, կա՛մ կիրակի մը
մէջը կը մտնէ, եւ կա՛մ ալ Ս. Բարսեղի
շաբաթ օրը, որով մնացած օրերը իրապէս
հինգ լման օրեր կ'ըլլան պահել համար:
Ուրեմն ընդհատուող շաբաթապահք մըն է:
Ուստի սխալ է Ա-Զ հաշուել, միշտ կը մնայ
Ա-Ե օր պահոց:

Քանի որ հայ կաթողիկէները Դեկտեմ-
բեր 25ին կը տօնեն Քրիստոսի Ծնունդը
ընդհանուր Քրիստոնէութեան հետ միասին,
Աստուածայայտութեան այս շաբաթապահքը
փոխադրած են Դեկտեմբերի 25էն առաջ:
Աստուածայայտութեան շաբաթապահքի ըն-
կալեալ վերի օրէնքին համաձայն ուրեմն
Ծնունդի այս շաբաթապահքի բարեկենդանը
ըլլալու է Դեկտեմբեր 17ին: Այսպէս կու տայ
հրահանգը, վերը յիշուած, Վիեննա հրա-
տարակուած, Տարեւոր Դպրութիւնն ալ:
Էջ 362 կը կարդանք. «Ի Դեկտեմբերի Ժէ.
յոր օր եւ հանդիպի՝ Բարեկենդան է Ծննդեան
Տեառն եւ սպա Պահք Ծննդեան, եւ տօնք ոչ
լինին»: Նոյնը կը հաստատուի նաեւ էջ 367ի
վրայ, տոմարական պատկերին մէջ: Այս
ձեւով, յայտնի է, որ նկատի առնուած է, որ
ա՛յդքան ժամանակի մէջ կիրակի մը, կամ
Աւագ Տօն մը հանդիպելուն՝ կը պահուի հինգ
օրուան երկարութեամբ շաբաթապահքը:
Նոյն հրահանգը կը գտնենք նաեւ Հայ
Կաթողիկէ Պատրիարքարանի անունով
1904ին Վիեննա հրատարակուած «Խորհրդա-
տետր Սրբոյ Պատարագին ըստ Արարողու-
թեան Հայաստանեայց Եկեղեցւոյ» ձաշոցին
մէջ, տես էջ 742 «Ի Դեկտեմբերի Ժէ. հա-
նապազ բարեկենդան է Ծննդեան Տեառն

մերոյ Յիսուսի Քրիստոսի» եւ էջ 748. «Ի
Դեկտեմբերի ԺԸ. պահք Ծննդեան Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Անդին սակայն, նո՛յնպէս Վիեննայի հը-
րատարակութիւն՝ «Ժամակարգութիւն Եկե-
ղեցւոյ Հայաստանեայց» Գ. հատորին մէջ,
տպագրուած 1879ին, էջ 970ի վրայ կը կար-
դանք. «Ի Դեկտեմբերի Իննեւտասն սկսանին
Պահք Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի»: Բարեկենդանը կ'ունենանք ուրեմն
վերը՝ Ժէ, իսկ հոս՝ ԺԸ, ո՛րն է ուղիղը: Մեր
կարծիքով՝ առաջինը: Վենետիկի օրացոյցը
այս բարեկենդանը կը դնէ միշտ Դեկտեմբեր
17ին, բացառութիւն են 1977ի օրացոյցը, ուր
բոլորովին դանց առնուած է այս շաբաթա-
պահքը, 1960՝ 18 Դեկտեմբեր, իսկ 1979՝
16: Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի օրա-
ցոյցը՝ 1977, 1979, 1981՝ 18, 1982՝ 19, 1980՝
16 Դեկտեմբեր!»: Խառնակութիւն մը:

Գալով ազգային, Առաքելական Եկե-
ղեցւոյ տօնացոյցերուն, Յիսնակամուտի բա-
րեկենդանի կիրակին Յիսնակաց չըլանի մաս
չեն հաշուեր, այլ Պաշտի: Ասոնց մօտ Յիսնա-
կաց Ա. Կիրակին է շաբաթապահքին յաջոր-
դող կիրակին, որ հայ կաթողիկէ տօնացոյ-
ցերու մէջ երկրորդ կը կոչուի: Նկատի առ-
նելով, որ Յիսնակամուտի պահոց այդ շա-
բաթը ամբողջ Յիսնակաց չըլանի յիսուն
օրուան առաջին շաբաթն է, եւ ոչ թէ պատ-
րաստութիւն մեծ տօնի մը, ինչպէս է Վար-
դապառի, Փոխման, Պաշտեցոյցի շաբաթա-
պահքը, պէտք է ամբողջին վրայ հաշուել,
որով շաբաթապահքի բարեկենդանի կիրա-
կին պէտք է անուանել Յիսնակաց Ա. Կի-
րակի:

Առաջարկ մը հայ կաթողիկէ Պատրի-
արքութեան Միսական Յանձնախումբին.

ա. Պահել իբրեւ տօն Դեկտեմբեր 25ը,
աւանց նախորդող շաբաթապահքի.

բ. Վերցնել, Դեկտեմբեր 25ին յաջոր-
դող Ծննդեան ութօրէքը.

գ. Դեկտեմբեր 26ին Ս. Ստեփանոս
տօնել միայն ա՛յն ատեն, երբ օրը կիրակի,
չորեքշաբթի կամ ուրբաթ չէ՛, սպա թէ ոչ
տօնը փոխադրել 27ին: Եթէ 26ը կիրակի է,
տօնել իբրեւ Յիսնակաց Զ. Կիրակի, յարու-
թեան բնոյթով: Այս կրնայ պատահիլ, երբ
տարւոյ գիրն է՝ Է, Ծ, Թ, Ռ կամ Փ եւ ՔՓ:

Իսկ եթէ 26ը չորեքշաբթի կամ ուրբաթ է,
(Դ, Ի, Լ, Զ, Բ, եւ Բ, Թ, Հ, Ծ, Վ գիրով
տարիներուն) որպէսզի Ծնունդի յաջորդ օրը
պահքով անհամ չըլլայ, այդ չորեքշաբթին
կամ ուրբաթը, տօնել իբրեւ Բ. օր Ծննդեան,
Աստուածայայտութեան Բ. օրուան շաբա-
կաններով եւ հայ կաթողիկէ ճաշոցի մէջ նը-
շանակուած Ծնունդի Զ. օրուան պատարագի
ընթերցուածով ու է. օրուան աւետարանով,
տես՝ էջ 15 եւ 16.

դ. Աստուածայայտութեան շաբաթա-
պահքը սկսիլ միշտ Դեկտեմբերի 29ի բարե-
կենդանով, ինչպէս է աւանդական հրահանգը
հայութեան ջախջախիչ մեծամասնութեան
մօտ.

ե. Աւելորդաց կիրակին յաջորդող
շաբթուն ընթացքին, ծակեր լեցնելու համար
հնուց ի վեր հնարուած Համօրէն Հրեշտակաց,
Համօրէն Մարդարէից, Համօրէն Առաքելոց
տօները վերցնել, պահել միայն շաբաթ
օրուան Ամենայն Սրբոցը, եւ վերցուածնե-
րուն տեղ դնել Դեկտեմբերի Աւագ Տօներէն
առաջ եղող շաբթուան, մէջտեղ մնացած
սուրբերը: Այսպէս ըրած են արդէն ազգային
Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցերէն շա-
տեր:

Ս. Յակոբայ շաբաթապահքը ժողովուր-
դի մօտ կը կոչուէր նաեւ Նախարարի պաս:
Ասկէ ալ առաջ, պարզատումարներու համա-
ձայն, Նոյեմբեր 23ին կու դայ Լմբռնադ-ը:
Նոյեմբեր 23էն մինչեւ Ս. Յակոբի ժամանա-
կամիջոցը, հայ դիւղացին, նկատի առնելով
Հայաստանի առաւել կամ նուազ ցուրտ
գաւառները, արօտատեղիներէն կը հաւաքէր
հօտն ու նախիրը ձմերոցներուն մէջ պատըս-
պարելու համար: Այս անսովոր ըմբռնադ
բառը զանազան ձեւերով մեկնուած է, ամե-
նէն հաւանական մեկնութիւնը կը համարի
Աճառեան, որ նոյնը՝ լատիներէն՝ hiber-
nalis, Քրանսերէն՝ hibernal, բառին աղաւա-
ղումն ըլլայ: այսինքն ձմեռնային (իլեան,
կայան): Շատ հետաքրքրական է այս մեկ-
նութիւնը, քանի որ լատիներէնի մէջ կայ
նաեւ զինուորական բառ մը՝ Hiberna, որ կը
նշանակէ զինուորներու ձմեռուայ բանակա-
տեղի: